Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թ.
հուլիսի 8-ի նիստի N 32
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ
ՀԱԿԱՄԱՆՐԷԱՅԻՆ ԴԵՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	**Պատասխանատու**	**Համակատարող**	**Կատարման ժամկետը**	**Ակնկալվող արդյունք**	**Ակնկալվող ֆինանսական միջոցները**	**Վերստուգելի չափանիշ**
Ռազմավարական ուղղություն 1. **Նպատակը՝** ՀՀ հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելմանն ուղղված գործողությունների կառավարման միասնական համակարգի ձևավորում						
1) «Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության և հակամանրէային դեղերի սպառման կարգավորմանն ուղղված գործողությունների իրականացման համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ	ՀՀ առողջապահության նախարարություն		2015 թվական	Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության վերաբերյալ իրազեկման բարձրացման, տվյալների հավաքագրման և հսկողության հարցում՝ միջգերատեսչական համագործակցության իրականացում:	Ֆինանսավորում չի պահանջում	Համակարգող հանձնաժողովի աշխատակարգով սահմանված պահանջներին համապատասխան իրականացված գործունեություն:

կառավարություն:						
2) Ընդունել «Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունությանը և հակամանրէային դեղերի սպառման կարգավորմանն ուղղված գործողությունների իրականացման համար մշտապես գործող աշխատանքային խումբ ստեղծելու և աշխատանքային խմբի գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման:	ՀՀ առողջապահության նախարարություն		2015 թվական	Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելման ուղղված միջոցառումների կազմակերպման համակարգում:	Ֆինանսավորում չի պահանջում	Աշխատանքային խմբի գործունեության կարգին համապատասխան իրականացված աշխատանքների իրականացում:
3) Համագործակցել հանրային առողջապահության բնագավառում գործող հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ՝ հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելման հարցում:	ՀՀ առողջապահության նախարարություն	Հասարակական կազմակերպություն/ներ (համաձայնությամբ Միջազգային կազմակերպություններ (համաձայնո	2016-2020 թվականներ	Ռազմավարության ներդրման և համատեղ միջոցառումների իրականացման գործընթացում քաղաքացիական հասարակության և հանրային առողջապահության բնագավառում գործող հասարակական կազմակերպությունների	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	Նշված ժամկետում առնվազն 2 գործող հասարակական կազմակերպությունների ներգրավում:

		ությամբ)		ներգրավում:		
4) Շահագրգիռ պետական մարմիններում իրականացնել հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հիմնահարցերի վերաբերյալ պարբերական քննարկումներ, արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնել միջգերատեսչական հանձնաժողովին:	ՀՀ առողջապահության նախարարություն		2016-2020 թվականներ	Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելմանը և հակամանրէային դեղերի սպառման կարգավորմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ հաշվետվողականության ապահովում:	Ֆինանսավորում չի պահանջում	Տարեկան առնվազն 2 քննարկումների կազմակերպում, քննարկումների արդյունքների վերաբերյալ երկու հաշվետվության առկայություն:
Ռազմավարական ուղղություն 2. Նպատակը՝ հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության առաջացման, հակամանրէային դեղերի օգտագործման՝ միջազգային մեթոդաբանությանը համապատասխան համաճարակաբանական հսկողության համակարգի ձևավորում և զարգացում						
1) ՀՀ առողջապահության նախարարի հրամանով ընդունել հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելման և հակամանրէային դեղերի պատշաճ օգտագործման վերաբերյալ ուղեցույց/ներ:	ՀՀ առողջապահության նախարարություն	Հասարակական կազմակերպություն/ներ (համաձայնությամբ Միջազգային	2017-2020 թվականներ	Միջազգային մոտեցումների և ԱՀԿ- ի մեթոդական առաջարկություններին համապատասխան հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության և հակամանրէային դեղերի	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	Նշված ժամկետում առնվազն 2 ուղեցույցի ընդունում, դրանց վերաբերյալ շահառուներին պաշտոնական գրավոր ձևով ծանուցում և ՀՀ

		կազմակերպություններ (համաձայնությամբ)		պատշաճ օգտագործման վերաբերյալ ուղեցույց/ների որդեգրում:		առողջապահության նախարարության կայքում տեղադրում:
2) ՀՀ առողջապահության նախարարի հրամանով ընդունել «Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության համաճարակաբանական հսկողության համակարգի գնահատման» մեթոդական ուղեցույց:	ՀՀ առողջապահության նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ Հասարակական կազմակերպություն/ներ (համաձայնությամբ) Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2019-2020 թվականներ	Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության համաճարակաբանական հսկողության համակարգի գնահատման համար անհրաժեշտ մեթոդաբանության առկայություն:	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	2021 թվականին առնվազն 2 բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իրականացված հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության համաճարակաբանական հսկողության համակարգի գործունեության գնահատում:

3) Հակամանրէային դեղերի կայունության ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի վերաբերյալ իրազեկել շահագրգիռ գերատեսչություններին, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին:	ՀՀ առողջապահության նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ	2016-2020 թվականներ	Ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում:	Ֆինանսավորում չի պահանջվում	Նշված ժամկետում իրավական ակտ/երի ընդունումից հետո շահառուներին գրավոր ծանուցում, ՀՀ առողջապահության նախարարության կայքում տեղեկատվության առկայություն:
Ռազմավարական ուղղություն 3. Նպատակը՝ ՀՀ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ապահովել ԱՀԿ և միջազգային մեթոդական առաջարկություններին համապատասխան վարակի հսկողության միջոցառումների իրականացումը և հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության զարգացման նվազեցմանն ուղղված համակարգված մշտադիտարկման և հսկողության համակարգի ձևավորում և ամրապնդում:						
1) ՀՀ առողջապահության նախարարության, մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող	ՀՀ առողջապահության նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ	2016-2017 թվականներ	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում հակամանրէային դեղերի նշանակման և պատշաճ օգտագործման	Ֆինանսավորում չի պահանջում	2018 թվականին առնվազն 2 բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությու

կազմակերպությունների տնօրենների հրամաններով ստեղծել խորհրդատվական դեղաբուժության հանձնաժողով:		մարզպետարաններ		նկատմամբ հսկողության սահմանում:		ններում խորհրդատվական դեղաբուժության հանձնաժողովների առկայություն:
2) ՀՀ առողջապահության նախարարի հրամանով ընդունել հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության մշտադիտարկման համար անհրաժեշտ հաշվառման, հաշվետվական ձևեր, ձևաթղթեր/մատյանների ձևանմուշներ:	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2016-2017 թվականներ	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում հակամանրէային դեղերի նկատմամբ համաճարակաբանական հսկողության համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ հաշվառման և հաշվետվական ձևանմուշների ստեղծում:	Ֆինանսավորում չի պահանջում	2018 թվականին մեկական գրանցման,հաշվառման և հաշվետվական ձևանմուշների առկայություն:
3) ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության բազայի վրա ստեղծել հակամանրէային դեղերի	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2018-2019 թվականներ	ՀՀ-ում համաճարակաբանական հսկողության համակարգի և մշտադիտարկման արդյունավետ աշխատանքի իրականացման	Ֆինանսավորում չի պահանջում	2020 թվականին էլեկտրոնային տվյալների բազայի գործադրում:

նկատմամբ կայունության վերաբերյալ ազգային էլեկտրոնային տվյալների բազա:				նպատակով անհրաժեշտ տեղեկատվական հիմքերի ստեղծում:		
Ռազմավարական ուղղություն 4. Նպատակը՝ ՀՀ ախտորոշման լաբորատոր համակարգում ապահովել հակամանրէային դեղերի նկատմամբ կայունությանն առնչվող հետազոտությունների իրականացման, ախտորոշման վերաբերյալ, ԱՀԿ և միջազգային մեթոդական առաջարկությունների որդեգրում, հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության միտումների գնահատում և կլինիկորեն նշանակալի դեպքերի, նոր երևան եկող կայուն շտամերի հայտնաբերում						
1) Աշխատանքներ տանել «Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության կենտրոնական Ասիայի և Արևելյան Եվրոպայի համացանց (CAESAR)»-ի հետ համագործակցության ապահովման ուղղությամբ:	ՀՀ առողջապահության նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ Հասարակական կազմակերպություն/ներ (համաձայնությամբ) Միջազգային կազմակերպ	2015-2020 թվականներ	Հակամանրէային դեղերի նկատմամբ կայուն մանրէների շրջանառության, զգայունության որոշման մեթոդաբանության վերաբերյալ կենտրոնական Ասիայի և Արևելյան Եվրոպայի համացանցի շրջանակներում տեղեկատվության փոխանակում:	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	Առնվազն տարին 1 անգամ ԱՀԿ կողմից՝ CAESAR-ի վերաբերյալ կազմակերպվող աշխատաժողովին համապատասխան մասնագետ/ների մասնակցություն;

		ություններ (համաձայնությամբ)				
2) Ազգային ռեֆերենս լաբորատորիան հագեցնել հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողությունն ապահովող համապատասխան նյութա-տեխնիկական և մասնագիտական բազայով:	ՀՀ առողջապահության նախարարություն	Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2016 -2020 թվականներ	Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության ռեֆերենս լաբորատոր կենտրոնի ստեղծում:	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	Նյութա-տեխնիկական և մասնագիտական բազայի համալրման վերաբերյալ միջգերատեսչական հանձնաժողովին՝ տարեկան գրավոր հաշվետվության առկայություն:
3) ՀՀ առողջապահության նախարարի հրամանով ընդունել հակամանրէային դեղերի նկատմամբ զգայունության լաբորատոր հետազոտման չափանիշների վերաբերյալ մեթոդաբանություն:	ՀՀ առողջապահության նախարարություն		2017-2018 թվականներ	ԱՀԿ- ի մեթոդական առաջարկություններին և միջազգային մոտեցումներին համապատասխան հակամանրէային դեղերի նկատմամբ զգայունության լաբորատոր հետազոտման չափանիշների	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	2020 թվականին 2 բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում մեթոդաբանության կիրառման վերաբերյալ գրավոր հաշվետվության առկայություն:

				որդեգրում:		
4) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների մասնագետներին տրամադրել մեթոդագործնական աջակցություն՝ հակամանրէային դեղերի նկատմամբ զգայունության լաբորատոր հետազոտման չափանիշների վերաբերյալ:	ՀՀ առողջապահության նախարարություն		2019-2020 թվականներ	Հակամանրէային դեղերի նկատմամբ զգայունության լաբարատոր հետազոտման միջազգային մոտեցումների վերաբերյալ մասնագետների իրազեկվացության բարձրացում:	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	2020 թվականին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առնվազն 3 կազմակերպություններում մեթոդագործնական աջակցության կազմակերպում:

5) Իրականացնել ռեֆերենս լաբորատորիայի համագործակցություն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների հետ, սահմանել լաբորատոր հետազոտությունների արդյունքների և որակի գնահատման կանոնավոր գործընթացներ:	ՀՀ առողջապահության նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ	2019-2020 թվականներ	Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության որոշման ազգային ռեֆերենս լաբորատորիայի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների միջև համագործակցության մեխանիզմների առկայություն՝ ներառյալ լաբորատոր արդյունքների հսկողությունը և հաստատումը:	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	2021 թվականին առնվազն 2 բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում լաբորատոր հետազոտությունների արդյունքների և որակի գնահատման իրականացում:
6) Շարունակաբար զարգացնել ազգային ռեֆերենս լաբորատորիայի հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության որոշման կարողությունները:	ՀՀ առողջապահության նախարարություն		2015-2020 թվականներ	Միջազգային չափնիշներին համապատասխան՝ լաբորատոր ծառայության որակի ապահովում:	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	Առնվազն տարին 1 անգամ մասնագետների՝ համապատասխան թեմայով միջազգային դասընթացներին/աշխատաժողովներին մասնակցություն:
Ռազմավարական ուղղություն 5. Նպատակը՝ ՀՀ դեղերի արտադրության, բաշխման, պահպանման, դեղատնային գործունեության օրենսդրական դաշտի						

կարգավորում, որակի, անվտանգության և արդյունավետության երաշխավորում, դեղերի նշանակման և կիրառման բարելավում, կիրառման շարունակական դիտարկման ապահովում և ոչ ռացիոնալ կիրառման նվազեցում						
1) Դեղերի շրջանառության օրենսդրական դաշտի կարգավորում	ՀՀ առողջապահության նախարարություն		2015-2020 թվականներ	Դեղերի գրանցման և հետգրանցումային դիտարկումների գործընթացների հստակեցում, ինչպես նաև արտադրության, բաշխման, պահպանման, դեղատնային գործունեության, գովազդի և տեղեկատվության պահանջների սահմանում:	Ֆինանսավորում չի պահանջում	Տարեկան առնվազն 5 իրավական ակտերի ընդունում, այդ թվում «Դեղերի մասին» նոր օրենքից բխող:
2) Իրականացնել դեղերի որակի ապահովման համակարգի մշտադիտարկում	ՀՀ առողջապահության նախարարություն		2015-2020 թվականներ	Որակի ապահովման և կեղծ դեղերի հայտնաբերման նպատակով՝ դեղերի արտադրական, բաշխման և դեղատնային գործունեության համապատասխանության դիտարկում:	Ֆինանսավորում չի պահանջում	Դեղերի արտադրություն, դեղերի մեծածախ իրացում և դեղատնային գործունեություն իրականացնող սուբյեկտների տարեկան առնվազն 20% -ի դիտարկումների հաշվետվություններ:

3) Իրականացնել հակամանրէային դեղերի կիրառման մշտադիտարկում	ՀՀ առողջապահության նախարարություն		2015-2020 թվականներ	Հակամանրէային դեղերի կիրառման տվյալների հիմնապաշար՝ միտումները հայտնաբերելու, կայունության դիտարկման տվյալների հետ համադրելու, այլ երկրների տվյալների հետ համեմատելու նպատակով	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	Նշված ժամկետում հակամանրէային դեղերի կիրառման տվյալների հիմնապաշարի գործարկում և արդյունքների վրա հիմնված աշխատանքների և միջոցառումների իրականացում
4) Մշակել և իրականացնել համաճարակաբանական հետազոտության կարճատև ծրագրեր՝ հակամանրէային դեղերի կիրառման միտումները հայտնաբերելու համար:	ՀՀ առողջապահության նախարարություն		2016-2020 թվականներ	Հակամանրէային դեղերի կիրառման վերաբերյալ հավաստի տվյալների առկայություն:	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	Նշված ժամկետում հակամանրէային դեղերի կիրառման վերաբերյալ հետազոտությունների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների առկայություն
Ռազմավարական ուղղություն 6. Նպատակը՝ հակամանրէային դեղերի օգտագործման և դեղակայուն ձևերի վերաբերյալ առողջապահական ոլորտի մասնագետների գիտելիքների բարելավում և կարողությունների զարգացում, ինչպես նաև հակամանրէային դեղերի խելամիտ օգտագործման կարևորության վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացում						
1) Ապահովել հակամանրէային դեղեր նշանակող առողջապահական ոլորտի մասնագետների շարունակական	ՀՀ առողջապահության նախարարություն	Տեղական ինքնակառավարման մարմիններ	2015-2020 թվականներին	Առողջապահական ոլորտի մասնագետների հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	Նշված ժամկետում առողջապահական ոլորտի

ուսուցում՝ (ներառյալ միջազգային սեմինարներին, դասընթացներին, աշխատաժողովներին, համաժողովներին մասնակցություն) հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելման և հակամանրէային դեղերի պատշաճ օգտագործման վերաբերյալ:		(համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություն/ներ (համաձայնությամբ) Միջազգային կազմակերպություն/ներ (համաձայնությամբ)		կանխարգելման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում;		համապատասխան մասնագետների առնվազն 20%-ի մասնակցություն շարունակական ուսուցման դասընթացներին:
2)Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելման և հակամանրէային դեղերի պատշաճ օգտագործման վերաբերյալ կրթական թեմաներն ինտեգրել բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բժշկական մասնագիտությունների ուսումնական ծրագրերում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն	2018 թվականին	Ժամանակակից պահանջներին համապատասխան՝ բժշկական մասնագիտական բազային կրթության բարեփոխում:	Ֆինանսավորում չի պահանջում	2020 թվականին ինտեգրված կրթական թեմաներով ուսումնական ծրագրերով ուսուցում
3)Բնակչության շրջանում	ՀՀ	Տեղական	2015-2020	Բնակչության շրջանում	Հայաստանի	Տարեկան

կազմակերպել հակամանրէային դեղերի օգտագործման և հակամանրէային դեղերի կայունության վերաբերյալ գիտելիքների տարածում, ներառյալ տեղեկատվական կրթական նյութերի տարածումը, սոցիալական գովազդների, քարոզարշավների կազմակերպումը, իրականացվող ծրագրերի վերաբերյալ ամենամյա հաշվետվություն/ների, զեկույցների պատրաստումը և հրապարակումը:	առողջապահության նախարարություն	ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություն/ներ (համաձայնությամբ) Դոնոր կազմակերպություններ (համաձայնությամբ)	թվականների ն	հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում, ծրագրի ընթացքի ամենամյա գնահատում և ամփոփում:	Հանրապետության օրենքով չարգելված աղբյուրներ	առնվազն 2 հանրային իրազեկման միջոցառման իրականացում:
4) Իրականացնել հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության վերաբերյալ գիտահետազոտական	<< առողջապահության նախարարություն	<< կրթության և գիտության նախարարություն	2016-2020 թվականներ	Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության վերաբերյալ փաստացի տվյալների առկայություն և կիրառում:	Ֆինանսավորում չի պահանջում	2020 թվականին հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության

ուսումնասիրություններ իրականացնող կազմակերպությունների հաշվառում, ուղղահայաց և հորիզոնական համագործակցության հաստատում, մեթոդաբանական աջակցության տրամադրում:		Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն				կանխարգելման գործընթացում հաշվառված գիտահետազոտական կազմակերպությունների առնվազն 20%-ի ներգրավում:
Ռազմավարականուղղություն 7. Նպատակը՝ ՀՀ գյուղատնտեսության ոլորտներում հակամանրէային դեղերի օգտագործման վերահսկման, փոխտեղեկատվության ապահովում, հակամանրէային դեղերի օգտագործման և դեղակայուն ձևերի վերաբերյալ անասնաբուժության ոլորտի մասնագետների շարունակական ուսուցման ապահովում						
1) Ապահովել անասնաբուժության ոլորտի մասնագետների մասնակցությունը հակամանրէային դեղերի պատշաճ օգտագործման և հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության վերաբերյալ սեմինարներին և հանդիպումներին:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ՀՀ Կրթության և գիտության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն Հասարակական կազմակերպ	2017-2018 թվականներ	Անասնաբուժության ոլորտի մասնագետների հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում;	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	2019 թվականին նասնաբուժության ոլորտի մասնագետների առնվազն 10%-ի մասնակցություն սեմինարներին և հանդիպումներին:

		ություն/ներ (համաձայնությամբ)				
2)Հակամանրէային դեղերի պատշաճ օգտագործման վերաբերյալ կրթական թեմաներն ինտեգրել բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անասնաբուժության մասնագիտության ուսումնական ծրագրերում:	ՀՀ Կրթության և գիտության նախարարություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	2018-2019 թվականներ	Ժամանակակից պահանջներին համապատասխան՝ «անասնաբուժություն» մասնագիտության բազային կրթության բարեփոխում:	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	2020 թվականին ինտեգրված կրթական թեմաներով ուսումնական ծրագրերով ուսուցում:
3) Մշակել և իրավական ակտով ընդունել անասնաբուծության ոլորտում կերային հավելումների (հակաբիոտիկների) օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանող մեխանիզմներ:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն	2016-2017 թվականներ	Անասնաբուծության ոլորտում հակամանրէային դեղերի օգտագործման սահմանափակում՝ մարդկանց մոտ հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության զարգացումը կանխելու նպատակով:	Ֆինանսավորում չի պահանջում	2019 թվականին համապատասխան կազմակերպությունների առնվազն 40%-ում իրականացված գնահատում: